ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2026 թվականի թիվ 71-Ա

ք.Երևան

«ՇԱՐԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 19-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 18 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2026 թվականի մայիսի 18-ին իրականացրել է «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) 2026 թվականի մայիսի 17-ի տեսագրության մշտադիտարկում:

Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) և Օրենքի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ, և 2026 թվականի մայիսի 19-ին կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝

«5-ՐԴ ԱԼԻՔ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի մայիսի 17-ի տեսագրության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ժամը 18:24:43–18:26:43, 19:03:26–19:05:26, 20:24:18–20:26:18 և 22:31:56–22:33:56 հեռարձակված քաղաքական գովազդը պարունակել է տարրեր՝ ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության վարկաբեկման և նսեմացման, մասնավորապես՝ Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիրը վերածվում է մզկիթի, Մայր Հայաստան հուշարձանի փոխարեն՝ Աթաթուրքի արձանն է:

Միաժամանակ վերոնշյալ քաղաքական գովազդը չի ներառել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 մայիսի 19-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 18 վարչական վարույթը:

Հանձաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 21.05.2026թ. թիվ Ե/04/04.1/375-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 29.05.2026թ. ներկայացրել է դիրքորոշում, որում մասնավորապես նշել է, որ

Չի ընդունում իրավախախտման առկայությունը՝ նշելով, որ

« I. (…) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի նպատակներից են հավաստի տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքի ապահովումը, կարծիքների արտահայտման իրավունքի երաշխավորումը, տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախության երաշխավորումը, ինչպես նաև տեսալսողական հաղորդումների բազմազանության զարգացումը: Նույն օրենքով երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության և տարածման իրավունքը, իսկ տեսալսողական տեղեկատվության գրաքննությունն արգելվում է:

Այս սկզբունքները հատուկ նշանակություն ունեն նախընտրական ժամանակահատվածում, երբ հանրությունն ունի տարբեր քաղաքական ուժերի, գաղափարների, տեսակետների և ընտրական ուղերձների հետ ծանոթանալու առավել բարձր հանրային շահ: Նախընտրական քարոզչական նյութերը, նույնիսկ եթե դրանք ունեն հուզական, քննադատական, խորհրդանշական, քաղաքականապես սուր ձևակերպումներ, իրենց բնույթով գտնվում են քաղաքական խոսքի պաշտպանության դաշտում: Այդպիսի նյութերի նկատմամբ միջամտությունը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ առկա է հստակ, օրենքով նախատեսված, ապացուցված և համաչափ սահմանափակման հիմք: (…)»:

«II. (…) Ծանուցման և արձանագրության ուսումնասիրությունից բխում է, որ նույն տեսանյութը մի կողմից դիտարկվում է որպես նախընտրական քարոզչության կամ քաղաքական գովազդի շրջանակներում հեռարձակված նյութ, իսկ մյուս կողմից՝ դրա նկատմամբ փորձ է արվում կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամային սահմանափակման ռեժիմը:

Նման մոտեցումը իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց է: (…)»:

«III. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է հատուկ ժամային սահմանափակում այն տեսալսողական հաղորդումների համար, որոնք իրենց բնույթով պատկանում են օրենքով հստակ թվարկված բովանդակային կատեգորիաներին՝ էրոտիկ բնույթի հաղորդումներ և ֆիլմեր, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմեր, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմեր ու հաղորդումներ, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման կամ դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումներ:

Սույն նորմի նպատակն է պաշտպանել անչափահասներին որոշակի հատուկ բնույթի բովանդակությունից, այլ ոչ թե քաղաքական, նախընտրական կամ հասարակական նշանակություն ունեցող խոսքը տեղափոխել գիշերային ժամեր՝ այն պատճառով, որ այն կարող է լինել հուզական, խորհրդանշական կամ քաղաքականապես սուր:(…)»:

«IV. Մայր Հայաստանի հուշարձանի, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կամ այլ ազգային խորհրդանիշների ցուցադրումն ինքնին իրավախախտում չէ: (…)

(…) ավելին՝ հոլովակի վրա առկա «Պատրաստված է ԱԲ միջոցով» գրառումը նույնպես, փաստում է, որ հոլովակը չի կարող ընկալվել որպես պատմական իրողության ներկայացում,

առավել ևս՝ դրանց խեղաթյուրում, քանի որ այն ունի երևակայական սցենարի բովանդակություն, ինչը կոնկրետ քաղաքական թիմի նախընտրական քարոզչության շրջանակներում ստանձնած ուղղություններից է նման մարտահրավերների պատկերներ ներկայացնելը (…)

«V. Քաղաքական խոսքի հուզական կամ խորհրդանշական բնույթը չի կարող վերածվել վարչական պատասխանատվության հիմքի (…):

(…) Հակառակ մոտեցումը կհանգեցնի նրան, որ Հեռարձակողները ստիպված կլինեն նախընտրական շրջանում նախապես գնահատել քաղաքական ուժերի քարոզչական նյութերի գաղափարական, խորհրդանշական կամ արժեքային ուղերձների ընդունելիությունը և այդ հիմքով հրաժարվել դրանց հեռարձակումից կամ սահմանափակել դրանց հեռարձակման ժամը:

Դա փաստացի կարող է հանգեցնել քաղաքական խոսքի նախնական վերահսկողության և գրաքննության, ինչը հակասում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի նպատակներին և տեսալսողական տեղեկատվության ազատության սկզբունքին:»:

«VI. Արձանագրությունը չի չբավարարում վարչական վարույթի համար անհրաժեշտ փաստական հիմնավորվածության պահանջին(…):»:

«VII. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասով տուգանքի հիմք առկա չէ (…)»:

«VIII. Հանձնաժողովի իրավակիրառումը պետք է լինի հավասար, անաչառ և կանխատեսելի. (…)

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով Հանձնաժողովը կարգավորող պետական մարմին է, որի գործունեությունը պետք է իրականացվի օրինականության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, ինքնուրույնության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

(…) Նախընտրական քարոզչական նյութերի նկատմամբ կարգավորող մարմնի ցանկացած միջամտություն պետք է լինի առավելագույնս հստակ, կանխատեսելի, հավասար և ոչ ընտրովի: (…)

(…) մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ սույն թվականի մայիսի 17-ին նույն ԱԲ-ի միջոցով գեներացված շուրջ 2 րոպե տևողությամբ հոլովակը հեռարձակվել է նաև մի շարք այլ հեռուստաընկերությունների եթերում(…)սակայն նշված հեռարձակումների կապակցությամբ որևէ իրավական հետևանք չի առաջացել:(…)»:

Միաժամանակ Հեռարձակողը խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.3.-րդ մասը սահմանում է.

«Քաղաքական գովազդը նախընտրական քարոզչության ձևերից է, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: Քաղաքական գովազդը ներառում է ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ: Քաղաքական գովազդ են համարվում նաև տեսաձայնային հայտարարություններն այն մասին, որ համերգները կամ հանրային այլ միջոցառումներն իրականացվում են

կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի աջակցությամբ, կամ որոնք ներառում են թեկնածուի կողմից այդ հանրային միջոցառումներին մասնակցության մասին փաստի հիշատակում:»:

Նույն օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

«1) տեսալսողական մեդիաձառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

2) կարգավորող պետական մարմին՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և ֆիլմերը, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն:»:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝

1) տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 73-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք խեղաթյուրում են հանրակրթական ուսումնադաստիարակչական ծրագրերում ներառված պատմական իրողությունները, վարկաբեկում և նսեմացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը:

Նույն չափորոշիչների 4-րդ կետի համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն ընկած ժամանակահատվածում:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՇԱՐԿ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հեռարձակող, պարտավոր է պահպանել օրենքներով սահմանված կարգավորող դրույթները:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2021 թվականի հունվարի 21-ից (սփռման տարածքը՝ ք. Երևան, լիցենզիայի սերիան, համարը՝ ԵՀ N 295, գործողության ժամկետը՝ 21.01.2021թ.-21.01.2028թ.) հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և

Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.3.-րդ մասի, Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների պահանջները:

Այսպես, հիմք ընդունելով օրենքների դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարչական վարույթի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված Դիրքորոշումը:

1. *<u>Քաղաքական խոսքի նկատմամբ միջամտության սահմանները</u>*

Հանձնաժողովը նախ ընդգծում է, որ Հեռարձակողների խմբագրական անկախության պաշտպանությունը կարևոր նախապայման է ժողովրդավարական հասարակության կայացման և տեղեկատվության ազատ հասանելիության համար, հատկապես այս հանգամանքն առավել կարևոր է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում: Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում շարունակելու է նպաստել հեռարձակվող տեսալսողական մեդիայի ոլորտում բազմակարծությանն ու անկախությանը՝ խթանելով հանրության իրազեկվածությունն ու ժողովրդավարական արժեքների ամրապնդումը:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովը կարևորում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով և Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գրաքննության արգելքի խիստ պահպանումը, նաև Հեռարձակողի կողմից արված այն դիտարկումը, որ «*այդ սկզբունքները հատուկ նշանակություն ունեն նախընտրական ժամանակահատվածում, երբ հանրությունն ունի տարբեր քաղաքական ուժերի, գաղափարների, տեսակետների և ընտրական ուղերձների հետ ծանոթանալու առավել բարձր հանրային շահ:*»:

Եվ այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ նախընտրական ժամանակահատվածում հատկապես կարևորվում է քաղաքական խոսքի պաշտպանությունը, միաժամանակ, ինչպես ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածից, այնպես էլ միջազգային իրավական պրակտիկայից բխում է, որ արտահայտվելու ազատությունը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է իրավաչափ նպատակների և հանրային շահի պաշտպանության համար:

Տվյալ դեպքում Օրենքն արտահայտվելու ազատությունը երաշխավորելուն զուգահեռ սահմանում է նաև հեռարձակողների պարտականությունները և տեսալսողական հաղորդումների բովանդակությանը ներկայացվող պարտադիր պահանջները, այդ թվում՝ անչափահասների ուղիղ շահերը պաշտպանելու ոլորտում: Հետևաբար, հաղորդման քաղաքական կամ նախընտրական բնույթն ինքնին չի բացառում դրա համապատասխանության գնահատումը Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը և դրանով սահմանված՝ 24:00-06:00 ժամային սահմանափակումը չի վերաբերում բացառապես էրոտիկ, պոռնկագրական, սարսափ կամ ակնհայտ բռնություն պարունակող հաղորդումներին: Նույն նորմով օրենսդիրը որպես ինքնուրույն կարգավորման առարկա նախատեսել է նաև անչափահասների առողջության,

մտավոր և ֆիզիկական զարգացման կամ դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով վերոգրյալ փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում այն հանգամանքը, որ որոշակի ժամերին անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակման արգելքն, ըստ էության, կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես, իր մեջ ներառում է անչափահասների առողջությունը, մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցությունից պահպանումը: Սույն վարույթի համատեքստում խնդրո առարկան կոնկրետ 2026 թվականի մայիսի 17-ին ժամը 18:24:43–18:26:43, 19:03:26–19:05:26, 20:24:18–20:26:18 և 22:31:56–22:33:56 հեռարձակված քաղաքական գովազդն է, որը պարունակել է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության վարկաբեկման և նսեմացման տարրեր և հեռարձակվել է Օրենքով արգելված ժամանակահատվածում:

Որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է.

«Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք՝ խեղաթյուրում են հանրակրթական ուսումնադաստիարակչական ծրագրերում ներառված պատմական իրողությունները, վարկաբեկում և նսեմացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը.»:

Տվյալ դեպքում «վարկաբեկում և նսեմացնում» ձևակերպումները ներառում են այնպիսի տեսալսողական բովանդակություն, որն իր ընդհանուր վիզուալ կամ գաղափարական ներկայացմամբ կարող է ձևավորել ազգային կամ մշակութային արժեքների նկատմամբ արժեզրկող, նսեմացնող կամ անհարգալից վերաբերմունք:

Նշենք նաև, որ Որոշմամբ սահմանված չափորոշիչները չեն նախատեսում նաև ցանկացած լրատվական, փաստավավերագրական, պատմական, մշակութային կամ պետական նշանակության տարրի արգելք: Այսպես, յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի կոնկրետ բովանդակության անհատական գնահատում՝ հաշվի առնելով հեռարձակվող տեսանյութի նպատակը, տարածման ձևը, թիրախային լսարանը, հեռարձակման ժամային հատվածը և հատկապես անչափահասների վրա հնարավոր ազդեցությունը: Հետևաբար, սույն դեպքում գնահատման առարկան ազգային և մշակութային խորհրդանիշների խեղաթյուրված ներկայացումն է նախընտրական քարոզչության շրջանակներում, լայն և կարևորը անչափահասների լսարանի համար հասանելի եթերաժամերին:

Հիշեցնենք նաև, որ «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 1616-Ն որոշմամբ հաստատված է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը, որտեղ ընդգրկված են ազգային և մշակութային խորհրդանիշներ հանդիսացող «Մայր Հայաստան» հուշարձանը և Մեծ Եղեռնի Զոհերի հուշահամալիրը:

Եվ այսպես, նշված իրավակարգավորումների և Օրենքի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է տեսալսողական հաղորդումների բովանդակային որոշակի սահմանափակումներ, այն է՝ Հեռարձակողները պարտավոր են

գնահատել ոչ միայն հաղորդման նպատակը կամ ժանրը, այլև դրա օբյեկտիվ ազդեցությունը անչափահասների վրա:

2. *Վարչական վարույթի շրջանակներում իրավական որոշակիությունը*

Ինչ վերաբերում է Հեռարձակողի հաջորդ պնդմանը, ապա նշենք, որ Հանձնաժողովն անհիմն է համարում, թե վարչական վարույթի շրջանակներում առկա է իրավական անորոշություն:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ քաղաքական գովազդի կարգավիճակը որևէ կերպ չի բացառում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների կիրառելիությունը: Ընդհակառակը, քաղաքական գովազդը, հանդիսանալով տեսալսողական տեղեկատվություն, ենթակա է ոչ միայն ընտրական օրենսդրության, այլև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված ընդհանուր և հատուկ պահանջներին:

Իսկ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ տեսալսողական տեղեկատվությունը հաճախականություններով և հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց և այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ, ներառյալ՝ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունն (ինտերակտիվ հեռուստատեսություն) է:

Միաժամանակ, վարչական վարույթը հարուցվել է ոչ թե քաղաքական դիրքորոշումների, գաղափարների կամ նախընտրական ուղերձների գնահատման, այլ այն հանգամանքի հիման վրա, որ հեռարձակված քաղաքական գովազդը պարունակել է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության վարկաբեկման և նսեմացման տարրեր, որի արգելքն էլ նախատեսված է օրենսդրությամբ:

3.*Վարչական պատասխանատվության անհատական բնույթը և յուրաքանչյուր վարույթի ինքնուրույն գնահատումը*

Բացի այդ, Հեռարձակողի հաջորդ պնդումն առ այն, որ նույն կամ համանման բովանդակությունը հեռարձակվել է նաև այլ հեռարձակողների կողմից, ինքնին չի կարող բացառել կամ վերացնել սույն վարչական վարույթի շրջանակներում գնահատվող հանգամանքները:

Վարչական պատասխանատվությունը կրում է անհատական բնույթ, և յուրաքանչյուր վարչական վարույթ իրականացվում է տվյալ գործով ձեռք բերված փաստերի և ապացույցների հիման վրա:

Նշվածի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինն ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ՝ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Հետևաբար, Հանձնաժողովն իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված ընթացակարգերի շրջանակներում, և մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերված յուրաքանչյուր հնարավոր իրավախախտում ենթակա է առանձին իրավական գնահատման:

Հանձնաժողովի կողմից կոնկրետ հեռարձակողի նկատմամբ վարչական վարույթի հարուցումը չի նշանակում, որ նույնաբովանդակ կամ համանման փաստերի առկայության

դեպքում այլ անձանց գործողությունները չեն կարող դառնալ առանձին ուսումնասիրության կամ վարչական վարույթի առարկա:

Հետևաբար, այլ անձանց հնարավոր վարքագծի վերաբերյալ ենթադրությունները չեն կարող հանդիսանալ սույն վարույթի շրջանակներում իրավախախտման փաստի բացակայությունը հաստատող հանգամանք:

4. *Մշտադիտարկման արձանագրության համապատասխանությունը օրենքի պահանջներին*

Օրենքի 42-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունում պետք է արտացոլվեն վարչական վարույթ հարուցելու համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները:

Օրենքի 42-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ Մշտադիտարկման իրականացման վերաբերյալ արձանագրության ձևը հաստատում է կարգավորող պետական մարմինը:

Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի «Տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների և օպերատորների գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևերը սահմանելու մասին» թիվ 117-Ա որոշման Հավելված 1-ով և 2-ով հաստատված են արձանագրության ձևերը:

Սույն Հավելվածներով հաստատված Ձևերում հստակ և մանրամասն ամրագրված են այն տվյալները, որոնք անհրաժեշտ են մշտադիտարկման գործընթացի իրականացման և վարչական վարույթ հարուցելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու տեսանկյունից:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից կազմված Արձանագրությունը լիովին համապատասխանում է Օրենքին և Հանձնաժողովի 28.09.2020 թվականի թիվ 117-Ա որոշման Հավելված 1-ով հաստատված ձևին:

Արձանագրությունում նշվել են հեռարձակված տեսանյութի բովանդակությունը, հեռարձակման ժամանակաշրջանը՝ տևողությունը, և իրավական գնահատման ենթակա հանգամանքները, որոնք բավարար են վարչական վարույթ հարուցելու համար:

Արձանագրում ենք, որ Հեռարձակողի գործունեության մշտադիտարկումն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան, հետևաբար Արձանագրության ոչ իրավաչափ լինելու Հեռարձակողի պնդումը ևս չունի իրավական հիմքեր:

5. *Տեսալսողական արտադրանքի իրավական գնահատումը՝ ըստ դրա բովանդակության և ազդեցության*

Հեռարձակողի հաջորդ պնդումը, թե հոլովակը պարունակել է «2031 թվական» նշումը և «Պատրաստված է ԱԲ միջոցով» գրառումը, ապա հարկ ենք համարում արձանագրել, որ սույն հանգամանքը չի վերացնում հաղորդման բովանդակության իրավական գնահատման անհրաժեշտությունը, քանի որ տեսալսողական արտադրանքը գնահատվում է այդ պահի դրությամբ իր ամբողջական ազդեցությամբ պայմանավորված:

Արհեստական բանականության միջոցով տվյալ տեսալսողական նյութի ստեղծման տեխնիկական եղանակն ինքնին որոշիչ չէ դրա իրավական գնահատման համար: Գնահատման առարկա կարող է լինել ոչ թե միայն այն հանգամանքը, թե նյութը ստեղծվել է ԱԲ տեխնոլոգիայի կիրառմամբ, այլ այն, թե տվյալ տեսալսողական բովանդակությունը, դրա տարածման ձևը և ներկայացման համատեքստը որքանով են համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

6. *Անչափահասների պաշտպանության միջազգային իրավական հիմքերը*

Հանձնաժողովը հարկ է համարում նշել նաև, որ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորելիս միջազգային պրակտիկան ևս անդրադարձ է կատարել երեխաների պաշտպանությանը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) դրույթներն արտացոլված են նաև «Երեխայի իրավունքների մասին» օրենքում: Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի վերջին պարբերությունը սահմանում է՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

Այսպիսով, յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում և ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունից, որոնք բացասաբար ազդեցություն կարող են ունենալ վերջիններիս դաստիարակության, ինչպես նաև բարոյականության, համամարդկային արժեքների ընկալման նկատմամբ: Երեխայի լավագույն շահը, տեղեկատվական անվտանգությունը պետք է գերակա լինի խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ:

Հետևաբար, տվյալ դեպքում խոսքը քաղաքական խոսքի սահմանափակման մասին չէ, այլ օրենքով նախատեսված վերահսկողական լիազորությունների իրականացման՝ ուղղված տեսալսողական մեդիայի ոլորտում գործող իրավական պահանջների պահպանման ապահովմանը:

Տվյալ պարագայում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ընդունված թիվ 73-Ն որոշման հիմքում դրված են հենց այս պայմաններն ու իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ դրույթները:

7. *Քաղաքական գովազդի նույնականացման սկզբունքը.*

Հանձնաժողովն արձանագրում է, որ ուսումնասիրված տեսալսողական նյութն իր բովանդակությամբ և ներկայացման եղանակով պարունակում է ընտրություններին մասնակցող թեկնածուին կամ քաղաքական ուժին բնորոշող անհատականացնող տարրեր և ուղղված է ընտրողների քաղաքական կամքի ձևավորման վրա ազդեցություն գործելուն:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.3-րդ մասի համաձայն՝ քաղաքական գովազդը նախընտրական քարոզչության ձևերից է, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: Նույն դրույթով սահմանվում է, որ քաղաքական գովազդը ներառում է նաև ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ:

Այսպես, վերը նշված նյութը համապատասխանում է քաղաքական գովազդի օրենսդրական հատկանիշներին, հետևաբար դրա նկատմամբ ենթակա են կիրառման քաղաքական գովազդի հեռարձակման և նույնականացման վերաբերյալ ընտրական օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Քաղաքական գովազդի՝ որպես այդպիսին հստակ առանձնացման և նույնականացման պահանջը կրում է պարտադիր՝ իմպերատիվ, բնույթ և ուղղված է

ընտրողների համար քաղաքական բնույթի հաղորդագրությունների թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև խմբագրական, տեղեկատվական և գովազդային բովանդակության տարանջատմանը:

Մինչդեռ ուսումնասիրված նյութում բացակայում են ընտրություններին մասնակցող կոնկրետ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքին կամ թեկնածուին բնորոշող խորհրդանիշները կամ անհատականացնող այլ նշանները: Եվ հետևաբար սպառողը՝ քաղաքացին, զրկված է եղել իր իրավունքից տարբերակելու, որոշելու, քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

Եվ այսպես, Հանձնաժողովը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստերն ու ապացույցները, հիմք ընդունելով օրենքների դրույթները, արձանագրում է հետևյալը.

Հեռարձակողի կողմից թույլ են տրվել իրավախախտումներ, որոնք համապատասխանում են Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.3.-րդ մասի, Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի և 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»:

Օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1.3.-րդ մասը, 20-րդ հոդվածի 10-րդ մասը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 12-րդ և 14-րդ կետերը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ և 18-րդ մասերը, 56-րդ հոդվածը, 57-րդ հոդվածի 19-րդ մասը, Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի թիվ 73-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 4-րդ ենթակետը, 4-րդ կետը և ղեկավարվելով Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը խախտելու համար կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 19-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ *400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:*
2. «ՇԱՐԿ» ՍՊ ընկերության նկատմամբ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները խախտելու համար կիրառել՝ Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական տույժը՝ *գրավոր նախազգուշացում*:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՇԱՐԿ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ.ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2026թ. հունիսի 12
ք. Երևան